

[1] Դուրս գրման ամսաթիվ		
13	Փետրվար	2019 թ.
[4] Մատուցման ամսաթիվը		
13	Փետրվար	2019 թ.

**Հաշիվ վավերագիր**  
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	3737279250
Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր

[5] Կնքման ամսաթիվ  
13 Փետրվար, 2019 թ.

[6] Համար  
Բ3737279250

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)  
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ  
[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ		N 2474602078940000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն		N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՄԻԿՈՆՅԱՆ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդամենը ծավալը կամ ժամանակացույցային քանակը	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 30101116	րոպե	1550	83.33		129161.5
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 68104016	րոպե	400	83.33		33332
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 12116816	ժամ	8.5	5000		42500
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն թր. գործ թիվ 13147716	ժամ	8.5	7500		63750
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն թր. գործ թիվ 59100316	րոպե	2560	116.67		298675.2
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 69104216	ժամ	4.5	5000		22500
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-անգլերեն-հայերեն թր. գործ թիվ 69108408	ժամ	3	7000		21000
8	իրավաբանական գրավոր թարգմանություն անգլերենից հայերեն թր. գործ թիվ 69108408	էջ	1	3500		3500
<b>Ընդամենը</b>						<b>614418.7</b>

Մտապոլիտիկ  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

ՏՆԱԿԻՆՅԱՆ ՎԱՐԴՈՒԽԻ 7803710425

(ստորագրություն, անունը, ազգանունը)

13/02/2019 16:35:23



Մտապոլիտիկ  
(աշխատանք  
ստացող)

(ստորագրություն, անունը, ազգանունը)



Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
/Թարգմանիչ ներգրավելու մասին/

Մ. Բ. Կ.

<<23>> մարտի 2016թ. գ. Ախուրյան  
ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Ա. Ա.  
Այվազյանս, քննարկելով վարույթիս թիվ 30101116 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 23-ին, ժամը 11-ի սահմաններում, Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի վարչական տարածքում գտնվող ավազահանքի բակում, <<Ախուրյան կոոպչին>> ՍՊԸ-ի մեխանիզատոր Ալբերտ Հրաչի Հովհաննիսյանն իր կողմից վարած <<TC-130>> մակնիշի թրթուրավոր տրակտորով քարշակել է նույն ընկերությունում որպես մեխանիզատոր աշխատող Հարություն Վարդանի Պողոսյանի կողմից վարած <<MOA3>> մակնիշի տրանսպորտային միջոցը՝ վերջինիս շարժիչը գործարկելու նպատակով, որի ընթացքում, շարժիչը գործարկվելուց հետո, տրակտորը կանգնել է, իսկ <<MOA3>> մակնիշի տրանսպորտային միջոցի վարորդը, խախտելով տրանսպորտային միջոցի շահագործման կանոնները, տրանսպորտային միջոցով ընթացել է առաջ, բախվել տրակտորին, որոնց արանքում մնացած Տարոն Վասպուրակի Ավետիսյանը ստացել է մարմնական վնասվածքներ և տեղում մահացել:

Փաստի առթիվ 2016 թվականի մարտի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային վարչության Ախուրյանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 30101116 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, կատարվում է նախաքննություն:


Նկատի ունենալով, որ քրեական գործով վկա Հարություն Վարդանի Պողոսյանն ազգությամբ հայ է, սակայն չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 30101116 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Ֆինլոու>> ՍՊԸ ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, ծնված 1960թ., Գյումրիում, հայ, ՀՀ քաղաքացի, բնակվում է Գյումրու Գորկու փողոցի 71 շենքի 5-րդ բնակարանում, բարձրագույն կրթությամբ, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:

2. Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանի իրավունքների և պարտականությունների հետ:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝



Ա.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 30101116 քրեական գործով

<<19>> հունիսի 2017 թ.

գ. Ախուրյան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա. Այվազյանս, վարույթիս թիվ 30101116 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը 23.03.2016 թ. որպես թարգման է ներգրավվել և 2016 թվականի մարտի 23-ին մասնակցել է քննչական գործողությունների կատարելով թարգմանություններ, որոնց ընդհանուր տևողությունը կազմել է 3 ժամ 50 րոպե:

Նույն քրեական գործով նախաքննության ընթացքում Հարություն Վարդանի Պողոսյանին 19.09.2016 թ. մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և նույն օրը Ալեքսանդր Գրիգորյանը մասնակցել է քննչական գործողությունների, կատարելով գրավոր և բանավոր թարգմանություններ, որոնց ընդհանուր տևողությունը կազմել է 6 ժամ 40 րոպե:

Այնուհետև նույն քրեական գործի շրջանակներում 18.11.2016 թվականին 20 րոպե տևողությամբ, 07.06.2017 թվականին 1 ժամ տևողությամբ, 10.06.2017 թվականին 1 ժամ 30 րոպե տևողությամբ, 17.06.2017 թվականին 20 րոպե տևողությամբ և 19.06.2017 թվականին 4 ժամ 30 րոպե տևողությամբ, ընդհանուր 7 ժամ 40 րոպե տևողությամբ մասնակցել է Հարություն Պողոսյանի հետ կատարված քննչական գործողությունների՝ կատարելով թարգմանություններ:

**ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝**



**Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ**

19. 06. 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

26.06.2016թ.

ք.Գյումրի

ՀՀ ՔԿ ՇՄ քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ա.Գյոզալյանս կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննվող թիվ 68104016 քրեական գործը 19.05.2016 թվականից քննիչ Յու. Բաղդասարյանից անցել է իմ վարույթում: 31.03.2016 թվականից «Ֆին լուս» ՄՊ ընկերության թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը ներգրավված է եղել գործով որպես թարգմանիչ և նախկինում մասնակցել է քննչական գործողություններին՝ վերջինը 2016 թվականի ապրիլի 11-ին, որի մասին ընկերությանն ուղարկվել է համապատասխան տեղեկանք:

29.06.2016 թվականին թարգմանիչ Ա.Գրիգորյանը սույն քրեական գործով ևս որպես թարգմանիչ մասնակցել է գործով տուժող Դենիս Կոնովալովի լրացուցիչ հարցաքննությանը, տեսագրությունների զննությանը և մի շարք այլ գործողությունների, որոնց գործողությունը կազմել է 6 ժամ 40 րոպե:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ

Ա.Ա.ԳՅՈԶԱԼՅԱՆ

Տնդեսկանք  
Թիվ 1216816 քրեական գործով

« 31 » հունվարի 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ս.Ս.Մանուկյանս, կազմեցի սույն տեղեկանքը այն մասին, որ 29.04.2016թ. որպես թարգմանիչ ներգրավված «ՖԻՆԼՈՈՒԻ» ընկերության տնօրեն, թարգմանիչ Վարդուի Ավետիսի Ծախինյանը սույն քրեական գործով կատարել է քանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը 8 ժամ 30 րոպե տևողությամբ:

Ավագ քննիչ՝



Ս.Ս.Մանուկյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
/ Թարգմանիչ ներգրավելու մասին/

31 մարտի 2016թ.

ք.Գյումրի

«Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Յ.Ա.Բաղդասարյան, քննարկելով Դենիս Սերգևիչի Կանավալովի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի



2016 թվականի մարտի 31-ին Դենիս Սերգևիչի Կանավալովը դիմում է ներկայացրել Շիրակի մարզային քննչական վարչություն այն մասին, որ 2016 թվականի մարտի 30-ին ժամը 01:00-ից մինչև 01:03-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը Գյումրի քաղաքի Խաղաղության օղակ 1/6 հասցեում գտնվող «Առեկսիմբասնկ-Գազպրոմբանկի խումբ» բանկին պատկանող բանկոմատի միջոցով իր բանկային քարտից հափշտակել է 38.737 ռուբլի 44 կոպեկ գումար:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել քննչական գործողություններ կատարելու՝ Դենիս Սերգևիչի Կանավալովի հետ, ով ազգությամբ ռուս է, չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, գրում է ռուսերեն լեզվով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Նախապատրաստվող նյութերով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլուս» ՍՊԸ-ի թարգմանիչ Ալեքսանդրա Ստեփանի Գրիգորյանին / ծնված 1960թ., հայ, «Քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, բնակվում է ք. Գյումրի Գորկու փողոցի 71 շենքի 5 բնակարանում, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայրերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով/ և վերջինիս բացատրել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

2.Ալեքսանդր Գրիգորյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ՝  Յ.Ա.Բաղդասարյան  


Ծանոթացա՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Թարգման ճանաչելու մասին

«03» մայիսի 2016թ.

ք. Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Շ.Գրիգորյանս, վերանայելով վարույթունս գտնվող թիվ 13147716 քրեական գործի նյութերը

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2016թ. ապրիլի 22-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում ժիրայր Հակոբի Հակոբյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2016թ. ապրիլի 21-ին ժամը 12.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ագաթանգեղոս-Խորենացի փողոցների խաչմերուկի մոտ թիվ 2 տրոլեյբուսի մեջ անհայտ անձը իր գրպանից հափշտակել է 50.000 ՀՀ դրամ գումար, որից հետո այդ անձի մոտ նկատելով իրենից հափշտակված իրերը, վերջինս ոտքով հարվածել է որովայնին ու դիմել փախուստի:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13147716 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:


Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ժիրայր Հակոբի Հակոբյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի արաբերեն լեզվի թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածներով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթունս գտնվող թիվ 13147716 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին/055-90-59-77/:
2. Մարալ Մարտիրոսի Զաքարյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ




Շ.Գրիգորյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ



Մ.Զաքարյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Ք Ն Ն Չ Ա Վ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե Ի Ե Ր Ե Վ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ի Ք Ն Ն Չ Ա Վ Ա Ն Վ Ա Ր Չ ՈՒ Թ Յ Ա Ն  
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ե Վ Ն ՈՐ Ք-Մ Ա Ր Ա Շ Վ Ա Ր Չ Ա Վ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր Ի  
Ք Ն Ն Չ Ա Վ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

29.07.16.

ք. Երևան, Կրաքյան 90

Տեղեկանք

Տրվում է տեղեկանքն այն մասին, որ «Ֆինլու» ՍՊԸ-ի արաբերեն լեզվի թարգմանիչ Մարալ Զաքարյանը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13147716 քրեական գործով կատարել է 8 ժամ 30 րոպե բանավոր թարգմանություն :

Ավագ քննիչ՝

Շ.Մ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
Թարգմանիչ ներգրավելու մասին

« 29 » ապրիլի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրևբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ս.Ս.Մանուկյանս, քննարկելով թիվ 12116816 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ. ապրիլի 11-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Վարդաշեն 9-րդ փողոցի 70 հասցեում գտնվող «Հանս Բրիստիան Կոֆոնդ» անօթևանների կացարանի 11-րդ սենյակում գումարային հարցի շուրջ տնդի ունեցած վիճաբանության ընթացքում Նուբար Հովհաննեսի Փիլիկյանը սենյակում եղած խոհանոցային դանակով մեկ անգամ հարվածել է Հովհաննես Ավագի Վարդանյանին և կրծքավանդակի ձախ կեսի հետին մակերևույթի ծակած-կտրած թափանցող, արյունահոսող վերքի, ձախակողմյան աննշան հիդրոպնևմոթորաքսի ձևով՝ Հ.Վարդանյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել ծանր վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրևբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 12.04.2016թ. ՀՀ քր. օր.-ի 112 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12116816 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ «Հանս Բրիստիան Կոֆոնդ» անօթևանների կացարանի 11-րդ սենյակում բնակվող Միլայի Անուշավանի Ակոպովը, չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Վարդուի Ավետիսի Ծախինյանը ունի բարձրագույն կրթություն, ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «ՖԻՆԼՈՒԻ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդուի Ավետիսի Ծախինյանին:

Ավագ քննիչ՝

*Թաթևազյան*



Ս.Ս.Մանուկյան



*Վ. Ա. Ծախինյան*

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

ք.Երևան

03.05.2016թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության կապիտան Ա.Ս.Սահակյան, վերանայելով թիվ 59100316 քրեական գործի նյութերը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով,

պարզեցի՝

Հայաստանի Հանրապետությունում 03Ա073770 համարի վկայականով Երևան քաղաքի Մ.Մաշտոցի պողոտայի 40 շենքի թիվ 15 տարածք հասցեում գործող «Շահինանս» խանութում առևտրային գործունեություն ծավալած «Թրիյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումների գանձման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը նորմատիվ իրավական ակտերի համապատասխան ապահովելու և այդ փաստաթղթերը հաստատելու պարտավորություն ունեցող աշխատակիցները, օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով դիտավորությամբ, չարամտորեն խուսափել են խոշոր չափերով՝ շուրջ 5.287324 ՀՀ դրամի հարկերը, ինչպես նաև տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց:

Դեպքի առթիվ 2016 թվականի փետրվարի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում հարուցվել է թիվ 59100316 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով:

Կատարված նախաքննությամբ, ինչպես նաև վկաների հարցաքննությամբ պարզվել է, որ «Թրիյան» ՍՊ ընկերության, ինչպես նաև նշված կազմակերպությանը պատկանող, Երևան քաղաքի Մ.Մաշտոցի պողոտայի 40 շենքի թիվ 15 տարածքում գործող «Շահինանս» խանութը, փաստացի պատկանում է Վահիկ Շահինանսին, քննությանը հետաքրքրող ժամանակահատվածում տնօրենը հանդիսացել է Արմեն Հովհաննիսյանը, հաշվապահն է՝ Ռուզաննա Բասմաջյանը, ինչպես նաև խանութում աշխատել են Ալվարդ Հարությունյանը՝ որպես հսկիչ-վաճառողուհի և Քրիստինե Սարգսյանը՝ որպես գանձապահ-վաճառողուհի:

Քննությամբ հաստատված և փաստական հանգամանքներ են այն, որ հիշյալ կազմակերպությունը Երևան քաղաքի Մ.Մաշտոցի պողոտայի 40 շենքի 15 տարածք հասցեում ծավալել է առևտրային գործունեություն, զբաղվում է չրերի, ընդեղենի, համեմունքների, թուրմերի և շոկոլադների վաճառքով: 2016 թվականի հունվարի 21-ից մինչև 2016 թվականի փետրվարի 9-ն ընկած ժամանակահատվածում այդ խանութից հայտնաբերվել և առգրավվել են մի շարք ապրանքատեսակներ, որոնց կամ արտադրողի կողմից տրված ժամկետն է լրացած եղել կամ էլ ՀՀ-ում գործող կարգին համապատասխան հայերեն մակնշված չեն եղել:

Այսինքն, առգրավված ապրանքատեսակների վրա կատարված գրառումները պարսկերեն են, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով: Մինչդեռ, նախաքննության ընթացքում անհրաժեշտ է թարգմանել նշված ապրանքատեսակների վրա առկա պարսկերեն գրառումները՝ մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելու համար:

Նախաքննության ընթացքում «Ֆինլու» ՍՊ ընկերության կողմից որպես պարսկերեն լեզվի թարգմանիչ տրամադրվել է Հերոս Ղահրամանի Դիդարյանտը, ով ազատորեն տիրապետում է պարսկերեն և հայերեն գրավոր և բանավոր խոսքին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 55-րդ հոդվածների պահանջներով,

որոշեցի՝

1. Թիվ 59100316 քրեական գործով առգրավված ապրանքատեսակների վրա առկա գրառումները թարգմանելու նպատակով որպես «Ֆինլու» ՍՊԸ պարսկերեն լեզվի թարգմանիչ ներգրավել Հերոս Դիդարյանտին:

2. Թարգմանիչ Հերոս Դիդարյանտին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ավագ քննիչ



Ա.Սահակյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքները և պարտականությունները քաջատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

թարգմանիչ՝



Հ.Դիդարյանտ

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Սահակյանիս վարույթում քննվող թիվ 59100316 քրեական գործով 03.05.2016 թվականին ներգրավել են որպես թարգմանիչ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հերոս Ղահրամանի Դիդարյանտը, որը կատարել է պարսկերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն 42 ժամ 40 րոպե ընդհանուր տևողությամբ:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

08.02.17թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
Թարգմանիչ ներգրավելու մասին

05 մայիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Հ.Հ.Չալարյանս, վերանայելով թիվ 69104216 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Երևան քաղաքի Հալաբյան փողոցի բանուկ մասում՝ թիվ 15-րդ շենքի դիմացի հատվածում, սպառողների կյանքի և առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող ծառայություններ մատուցելու հետևանքով պայթյուն է տեղի ունեցել թիվ 63-րդ ուղևորատար երթուղին իրականացնող «Բոգդան» մակնիշի, 48-29Տ հաշվառման համարանիշի ավտոբուսում, որի հետևանքով հիշյալ ավտոբուսի երկու ուղևորների անգգուշությամբ պատճառով է մահ, իսկ մի քանիսի առողջությանը՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ 2016թ. ապրիլի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է սույն քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Ամայա Մարտիրոսի Մարգարյան, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:


Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Ամայա Մարտիրոսի Մարգարյանին, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. պահանջներով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Ֆինլոու>> ՍՊ ընկերության տնօրեն, թարգմանչուհի Վարդուհի Ավետիսի Շահինյանին / անձն. ԱԻՈ 0512851 տրվ. 13.12.2007թ-ին 004-ի կողմից/, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝

Հ.Հ.ՉԱԼԱԲՅԱՆ

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են թարգմանիչ՝  Վ. Շահինյան

<< 05 >>  2016թ.

## ՏԵՂԵԿԱԼՔ

Տվյալ տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննված թիվ 69104216 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Ֆինլոու» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանը թիվ 69104216 քրեական գործով կասարել է 4 ժամ 30 րոպե տևողությամբ ուսերենից հայերեն և հայերենից ուսերեն բանավոր թարգմանություն:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝



Հ. Հ. ՉԱԼԱԲՅԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ հրավիրելու մասին**

05.05.2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Տ. Կիրակոսյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 69108408 քրեական գործի նյութերը

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Սույն քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Քրեգ Մորիս Բորիթին, ով չի տիրապետում դատավարության լեզվին՝ հայերենին, այլ տիրապետում է անգլերեն բանավոր և գրավոր լեզուներին:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել Քրեգ Մորիս Բորիթի հարցաքննությանը և նրա մասնակցությամբ կատարվելիք անհրաժեշտ այլ քննչական ու դատավարական գործողություններին մասնակից դարձնել անգլերեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզուներին տիրապետող թարգմանիչ Սոնա Արտուշի Փարեմուզյանին:

Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթում քննվող թիվ 69108408 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Սոնա Արտուշի Փարեմուզյանին /անձնագիր՝ AK 0279296/ ով ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն գրավոր ու բանավոր լեզուներին:
2. Թարգմանիչ Սոնա Փարեմուզյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**ՀԿԳ ավագ քննիչ,**

**արդարադատության փոխգնդապետ՝**

 **Տ. Կիրակոսյան**

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

« 05 » .05.2016թ.

Թարգմանիչ



Ս. Փարեմուզյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Ս. Կիրակոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 69108408 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրված Սոնա Արտուշի Փարեմուզյանը կատարել է անգլերեն-հայերեն 3 ժամ բանավոր և 1 էջ գրավոր թարգմանություն:

**ՀԿԳ ավագ քննիչ,  
արդարադատության փոխգնդապետ՝**



*S. Kirakosyan* **Ս. Կիրակոսյան**

05.05.2016թ.